ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ք. Սևան Կարմիր բանակի 68
հեռ. +374 261 2-34-00

N_____ 01.11. 2019 թ.

ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆ Ա/Ձ-ի ՏՆՕՐԵՆ

ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆԻՆ

ք. Բյուրեղավան, Զ. Անդրանիկի փողոց 32/48
ՀՎՀՀ 83834488

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի և Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ-ին կնքված ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7 ծածկագրով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանիորեն լուծելու մասին

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 14.02.2019թ-ին կնքված ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով Ընկերությունը ստանձել է պայմանագրով սահմանված հացի (Լավաշ) մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ <<Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար>>:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի իրականացրել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը: Ընկերությանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են գրություններ և պահանջվող քանակի վերաբերյալ պատվերներ, սակայն չմատակարարելու

մասին ոչ մի տեղեկություն չի ատացել: Միաժամանակ հայտնում եմ, որ Ընկերությունը չի պատասխանում հեռախոսազանգերի:

Պայմանագրի 2.1.7 կետը սահմանում է՝ Գնորդն իրավունք ունի <<Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի>>:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ առաջարկում եմ Պայմանագրի 6.2 կետով հաշվարկված տույժը և Պայմանագրի կատարման ապահովման գումարը վճարել ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի 16034026004300 հաշվահամարին:

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ն ՀՀ առողջապահության նախարարի 20.06.2019թ-ի թիվ 1647-Ա հրամանով վերանվանվել է ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ